

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՄԱՐՏԻՆ ՆՈՒՐՈՒՄԸ
«ՅԱՂԹԱՆԱԿԻ ԾԱՂԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱԿԱՆՈՒՄ» ԵՒ ԱՌԱՋԻՆ ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Առաջնորդանիստ Մայր Տաճարի շինարարական աշխատանքներու աւարտին նուիրուած «Յաղթանակի Ծաղկերոյթ-Պարահանդէս»ը եւ առաջին մոնավառութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, Յունիս 19ի երեկոյեան ժամը 7:00ին՝ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հանդիսապետութեամբ:

Առաջնորդ Սրբազան Դայրը ոգելորիչ պատգամ մը տուաւ ներկաներուն, գնահատեց բոլոր նուիրատուներուն տալու ոգին, յայտնեց թէ այս Տաճարը մնայուն խորհրդանիշն է մեր հաւատքին, որուն կեդրոնն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ թէ այս Տաճարին մէջ միշտ պիտի հնչեն մեր սրտաբառաւոր աղօթքները: Յոյս յայտնեց, որ նոր նուիրատուութիւններով կարելի պիտի ըլլար ամբողջութեամբ հոգալ Մայր Տաճարին կառուցման ծախսերը:

Սրբազան Դոր հանդիսապետութեամբ կատարուեցաւ յատուկ արարողութիւն մը հոգելորականներու մասնակցութեամբ:

Հոգեկան ցնծութիւն պատճառով այս առաջին արարողութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազան Դայրն ու հոգելորականները յատուկ աղօթք բարձրացուցին առ Աստուած՝ Դայրոց Դայրապետութեան եւ Դանրապետութեան համար: Առաջնորդ Սրբազան Դոր հրաւերով հաւատացեալներ մօտեցան խորանին եւ իրենց առաջին մոնը վառելով աղօթք մատուցին Աստուծոյ՝ մեծապէս մխիթարութիւն եւ հոգեկան գոհացում ստանալով կատարուած այս յուզիչ եւ տպաւորիչ արարողութենէն:

«ՅԱՂԹԱՆԱԿԻ ԾԱՂԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱԿԱՆՈՒՄ»
ԳԱԼԱՅԵԱՆ ՍՐԱԴԻՆ ՄԵՋ

Առաջնորդանիստ Մայր Տաճարի շինարարական աշխատանքներու աւարտին նուիրուած «Յաղթանակի Ծաղկերոյթ-Պարահանդէս» եւ առաջին մոնավառութենէն առաջ, ժամը 6:00 տեղի ունեցած հիւրասիրութենէն եւ կատարուած արարողութենէն ետք, Առաջնորդարաի Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան Դամալիրի Նազարէթ եւ Սիմա Գալայճեան Սրահին մէջ հաւաքուեցան հիւրերը: Սեղանները զեղեցիկ կերպով զարդարուած էին Մայր Տաճարի Դանգանակիչ Յանձնախումբի անդամ՝ Տիկին Մելինէ Աղաճանեանի եւ Ծաղկերոյթի Ատենապետուհի՝ Տիկին Լենա Սիմոնեանի կողմէ:

Օրուան հանդիսավարն էր Դանգանակիչ Յանձնախումբի անդամ՝ Տոքթ. Սիմոն Սիմոնեան: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Պրոֆ. Եկեղեցւոյ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Հոգելոր Դովինտէն՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան:

Դանդիսավար Տոքթ. Սիմոնեան իր բացման խօսքին մէջ ըսաւ.- «ԴԲԸՄ-ի ցկեանս Նախագահ՝ Ալեք Մանուկեան ըսած է. «Դայրենիքի իրականութիւնը եւ Սուրբ Էջմիածնի հոգեպարար գոյութիւնը երկու գլխաւոր կողմաններն են, որոնցմով հզօրացած՝ մենք զմեզ կապուած կը զգանք մարդկային պատմութեան եւ անոր ներկան կազմող ժամանակին»: Դիմա է այն պատեհ առիթը, որ բոլորս ալ ձեռք ձեռքի տալով, հաւաքուինք Առաջնորդարանի եւ Մայր Տաճարի շուրջ եւ ո՛չ միայն խօսքով, այլ գործով ցոյց տանք մեր անկեղծ սէրն ու յարգանքը եւ նուիրումը հանդէպ մեր Սուրբ Եկեղեցւոյ»:

Բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ «Յաղթանակի Ծաղկերոյթ-Պարահանդէս»ի Յանձնախումբի Ատենապետ՝ Տիկին Լենա Սիմոնեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Այս գիշեր միասնաբար կը տօնախմբենք Մայր Տաճարի շինութեան աւարտին նուիրուած հանդիսութիւնը, որ հոգելոր առաքելութիւն մըն է եւ մեր բոլորին տեսիլքի իրականացումը: Արդարեւ, մեծ թիւով հայորդիներ իրենց բաժինը ունեցան այս ծրագրի յաջողութեան մէջ»:

Ելոյթ ունեցաւ Մայր Տաճարի Դանգանակիչ Յանձնախումբի Ատենապետ Տիգր Անդրանիկ Զօրայեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Իմ անձնական հաւատքս այն է, որ հաւատացեալի մը համար ամենաբարձր պատիւն ու պարծանքն է արժանի ըլլալ ծառայել, իր հաւատքին եւ իր եկեղեցւոյ: Միշտ երախտապարտ պիտի մնամ ձեր բոլորին: Միասնաբար աշխատեցանք սուրբ նպատակի մը համար: Աստուծոյ օգնութեամբ եւ Առաջնորդ Սրբազան Դոր ցուցմունքներով եւ հաւաքական աշխատանքով յաջողութիւններ արձանագրեցինք եւ վերանորոգուած ոգիով պիտի շարունակենք մեր սկսած նուիրական առաքելութիւնը»:

Իսկ Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբի Ատենապետ՝ Տիգր Արմէն Դամբար իր ուրախութիւնը յայտնեց, որ կառուցման աշխատանքները բնականոն կերպով կ'ընթանային շնորհիւ Սրբազան Դոր աջալուրջ հսկողութեան, աղօթքներուն եւ կատարած մեծ ջանքերուն: Մայր Տաճարին

օճումը, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ պիտի կատարուի, պատմական եւ յիշատակելի պիտի մնայ թեմիս արդի պատմութեան մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր հոգեկան գոհունակութիւնը յայտնեց ներկայ հայրողիներու ներկայութեան եւ անոնց կատարած նուիրատուութիւններուն համար: Շեշտեց Առաջնորդանիստ Մայր Տաճարին կարեւորութիւնը ընդարձակուող թեմէն ներս: Յատկապէս յիշեց հանգուցեալ Ազգային Բարերար Արշակ Տիգրանեանի, Բարերարներ ճան Քէչոյեանի եւ Վարդգէս Պարսամի անունները, որոնց ունեցած իմաստութեան եւ եկեղեցասէր ծառայութեան շնորհիւ կարելի դարձած էր գնումը Առաջնորդարանի ներկայ համալիրին: Աղօթեց անոնց հոգիներուն համար: Յատուկ գնահատութիւնը յայտնեց թեմիս հոգեւորականներուն՝ իրենց մատուցած անձնուէր ծառայութիւններուն համար: Ապա Բարձր գնահատեց Շինութեան Յանձնախումբին մատուցած անխոնջ ծառայութիւնները՝ Ատենապետութեամբ Տիար Արմէն Համբարի, Հանգանակիչ Յանձնախումբի յուսալից աշխատանքները՝ Ատենապետութեամբ Տիար Անդրանիկ Զօրայեանի: Շնորհակալութիւն յայնեց նաեւ «Յաղթանակի Օրում» ճաշկերոյթի Յանձնախումբի Ատենապետ՝ Տիկին Լեւա Սիմոնեանի եւ Տիկին Մելինէ Աղաճանեանի: Սրբազան Հայրը ուրախութեամբ ներկայացուց թեմական խորհուրդի անդամ՝ Տիկին Լիլի Պալեանը եւ Բրշ. Պառլօ Սրկ. Տէր Մկրտիչեանը, որ 2008ին որպէս թեմական խորհուրդի անդամ ստորագրած էր Մայր Տաճարի շինութեան աշխատանքներուն համաձայնագիրը:

Իրաւաբան Տիար Ժոզէֆ Կանիմեան յայտարարեց, թէ Յունիս 4ին եւ 6ին Առաջնորդ Սրբազան Հօր Յօրեւիճական Հանդիսութիւններուն ներկայ չէին կրցած ըլլալ Սարօ եւ Ռաֆֆի Մարութեան Եղբայրներ: Մարութեան Եղբայրներ՝ Սրբազան Հօր Յօրեւիճական հանդիսութիւններուն առթիւ իրեն նուիրեցին ոսկեզօծ տառերով արձանագրուած Եպիսկոպոսական Պանակէ: Սրբազան Հայրը իր խորին շնորհակալութիւնները յայտնեց Մարութեան Եղբայրներուն:

ճաշկերոյթի առթիւ տպուած էր յատուկ գրքոյկ մը, որուն մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը կ'ըսէր. «Մեր սրտագին կոչն է թեմիս հաւատացեալներուն, որ բաժին ունենան Մայր Տաճարի կառուցման նուիրական առաքելութեան մէջ: Կարեւորը մասնակցութիւնն է: Հոս անգամ մը եւս կը յիշենք Սուրբ Պօղոս Առաքեալին խօսքը. *«Աստուած կը սիրէ զուարթառատ տուողը»* (Բ. Կորնթ. 9:7)

Արդարեւ Մայր Տաճարին տեսիլքը հողն ու ոսկին են մեր հոգեւոր կեանքին: Մայր Տաճարը դարձնենք մեր նպատակը, որպէսզի նոր հոգի մը միաւորէ մեզ բոլորս Աստուծոյ փառքին համար: Մայր Տաճարը ոսկեայ հոգեւոր կամուրջը պիտի հանդիսանայ Լուսաւորչահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեւ եւ բոլորս պիտի լուսաւորէ իր օրհնութեամբ»:

Հանգանակիչ Յանձնախումբը առ ի գնահատութիւն Տիար Անդրանիկ Զօրայեանի կատարած չափազանց նուիրեալ եւ բժախնդիր աշխատանքներուն, իրեն նուիրեց յիշատակի նուէր մը: